

աստուածակոխ քաղաքս յԵրուսաղէմ. ի թուականիս հայոց ՊԿԵ (=1416) ի մէջ Յարութեանս ի դուռն Ս. Գերեզմանին. և ընդ հովանեաւ Ս. Գողգոթայի և այլ տնօրինականացն Գրիստոսի Աստուծոյ մերոյ» (Նոսարֆ, էջ 49):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻՒՄԻԻՇԵԱՆ, ԿԵՍՍՐԱՅԻ. — Ծ. 1817ին. վաճառական մեծահարուստ. Կեսարիոյ մէջ բացած է վարժարան մը հօրը անուէնով: 1892ին 10,000 ոսկի կտակեց ի պէտս զանազան բարեգործական և կրթական հաստատութիւններու: Կտակեալ գումարին կիսովը պիտի գնուին միւլջ կալուածներ, իսկ միւս կէսը պիտի շահագործուի և արգիւնքին հարիւրին տասը պիտի յատկացուի Ս. Յակոբի վանքին, և մնացեալը զանազան հաստատութիւններու: Վախճանած է 1902ին Մարսէլլի մէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ (ՄՀՏ.) ՂԱԶԱՐԵԱՆ, ՏԷՐ ԲԱՐՍԵՂԵԱՆՑ, ՍՈՒՐՄԱԼՈՒՑԻ (Սնաք գիւղ, Իկսիւր). — 1813ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կը վերադառնայ 1814ին: Էջմիածնի միաբան Հմայեակ վրդ. Արշարունի բարեկամի մը մօտ գտած է 1840ին պատահած աղիտալի երկրաշարժի մը հետաքրքրական պատմութիւնը որ չորս հասարակ թղթի կտորներու վրայ գրուած է: Այդ թուղթերու հետ պահուած է վիլայսիակն մը որ տեղեկութիւններ կուտայ գրուածքին հեղինակ Մհա. Յովհաննէս Ղազարեանի ինքնութեան մասին. հոս կը գնենք վրկայականին ընգօրինակութիւնը. «Ի բնակչոց կոկչաու գաւառաւ. գաղթելոց ի Պայազիտ քաղաքէ. տուաւ այս վկայական գիր մահտեսի Օհաննէսի Ղազարեան Տէր Բարսեղեանց, բնակչի այժմ ի Սնաք գիւղն Սուրմալուա Իկզր՝ առ այն թէ ստացեալ է չորս աստիճան. ծնեալ է 1800 ամի փրկչական (ստորև կ'ուղղուի ՌՄԽԲ (= 1793) իր ինքնագիր յիշատակօրանովը) և մկրտեալ է ի սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ՝ ձեռամբ Տէր Բարթուղիմէոս քահանայի, որոյ կնքահայր է Գրիգորն Փիլիպոսեան, ընկալեալ է չորս աստիճան գղերիկոսութեան ի Պայազիտ քաղաքի. ի ձեռն արքեպիսկոպոսի հայոց Բարսեղի, Երբեմն առաջնորդի Թագէոս առաքելոյ վանից: Նախ քան զամուսնութիւն իւր ստացեալ է ուսումնականութիւն ի հասարակ ընթերցման և ընդ անցս զարգացման հասակի սորա չէ ծագեալ ի սորա կողմանէ վատութիւն ինչ կամ պակասութիւնս արքա-